ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«—» ———— 2024թ. **N -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով և 3-րդ կետով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N93-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 2024 թվականի ապրիլի 25-ի հ.14/7/62149-24 գրությամբ տրված համաձայնությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությանը՝ սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2024 թվականի մայիսի____-ի
N ____-Ա որոշման

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հ/Հ	Դիմող	Ծառայողական ավտոկայանատեղի տարածքի հասցե	Կայանատեղում «ավտոտեղ»-երի քանակ (տարածքի չափեր) և կայանման ձև	Կազմակերպչի կողմից վճարված տեղական վճար	Այլ տրանսպորտային միջոցների կայանման սահմանափակում, աշխատանքային ռեժիմ
1	«ՍԱՍ Գրուպ» ՍՊԸ	Արշակունյաց պողոտայի՝ հ.11/1 շենքին հարակից ճանապարհահատվածի երթևեկելի մասի տեղային լայնացման հատված	13 (33.15 մ x 5.01 մ), միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամաբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, շուրջօրյա
		Հալաբյան 22/5 շենքի հարակից ճանապարհահատված	13 (33.15 մ x 5.01 մ), միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամաբ՝ մեկ շարքով		սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, շուրջօրյա
		Կոմիտասի պողոտա՝ հ.52 շենքի թիվ 72 տարածքին հարակից ճանապարհահատված	10 (25.0 մ x 5.0 մ), միմյանց նկատմամբ մեքենաների զուգահեռ տեղաբաշխմամաբ՝ մեկ շարքով		սահմանափակմամբ, բացառությամբ Կոմիտասի պող. հ.52 հասցեի շենքի այլ սեփականատերերի և օրինական տիրապետողների, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, շուրջօրյա

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել համայնքի ղեկավարին՝ ավագանու որոշմամբ իրենց կողմից նշված տարածքում ավտոկայանատեղ նախատեսելու համար և վճարել ամսական կամ տարեկան վճարը ամբողջ ավտոկայանատեղի տարածքի համար: Վճարի չափը հաշվարկվում է ըստ տվյալ ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցների կայանման տեղերի թվի և ավագանու կողմից սահմանված մեկ ավտոտրանսպորտային միջոցի դրույքաչափի:

2. Ավտոկայանատեղի ամբողջ տարածքի համար վճար վճարած ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են սահմանափակել կամ չսահմանափակել տվյալ ավտոկայանատեղում այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, սակայն իրավունք չունեն ավտոկայանատեղից օգտվողից գանձելու վճար:

ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝

ծառայողական ավտոկայանատեղ՝ ավտոկայանատեղ, որի կազմակերպման իրավունքը վճարված տուրքի դիմաց հանձնված է որևէ իրավաբանական կամ ֆիզիկական անձի, որը կարող է սահմանափակել կամ չսահմանափակել տվյալ ավտոկայանատեղում այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, սակայն իրավունք չունի ավտոկայանատեղից օգտվողից գանձելու վճար:

Նույն որոշման հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ ավտոկայանատեղերի կազմակերպումն իրականացվում է համայնքի ավագանու որոշման հիման վրա: Ավտոկայանատեղերի տեղաբաշխումը համաձայնեցվում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության հետ: Եթե ավտոկայանատեղերը պետք է կազմակերպվեն զորամասերի, ռազմական կամ ազգային անվտանգության համակարգերի շենքերին կամ շինություններին հարակից տարածքներում, ապա այդ ավտոկայանատեղի տեղաբաշխումը համաձայնեցվում է նաև համապատասխան մարմինների հետ:

Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու թույլատրման խնդրանքով դիմել է՝ «Սաս -Գրուպ» ՍՊ ընկերությունը:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ համաձայնեցվել է ծառայողական ավտոկայանատեղիի տեղաբաշխումը, որի վերաբերյալ առկա է նշված կառույցի 2024 թվականի ապրիլի 25-ի հ.14/7/62149-24 գրությունը:

Ծառայողական ավտոկայանատեղը չի կազմակերպվելու զորամասերի, ռազմական կամ ազգային անվտանգության համակարգերի շենքերին կամ շինություններին հարակից տարածքներում:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ. 93-Ն որոշմամբ սահմանվել է Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման կարգը:

Ելնելով վերոգրյալ իրավական ակտերի պահանջներից և սահմանված դրույթներից՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ